№ 129 Յուլիսի 15 (27) 1881 Յուլիսի 15 (27) № 129

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաստանացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար գնվում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐՎԵԼ

ԿԷՍ ՏԱՐՈՎ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881 թւի, մինչև յունվարի 1-ը 1882 թւի։

Բաժանորդութեան գինը 6 բուբլ է։ Գրվելու համար պէտք է ուղղակի դիմել խմբագրութեանը հետևեալ հասցէով. *Тифлисъ, редакція „Мшакъ"*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներսէս պատրիարքի հրաժարականի յետ առնելը։—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Հայք և յոյնք։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ս. Պետերբուրգի Նահանգի ուսուցիչների ժողովի առիթով։

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՑԵՏ ԱՌՆԵԼԸ

—

Ինչպէս հաղորդում է մեզ մեր Կ. Պոլսի մշտական թղթակից Հայկակ, Ներսէս սըրբազանը վերջապէս յետ առաւ իր հրաժարականը, ուրեմն նա կրկին պատրիարք է։

Թիւրքաց հայերի այժմեան ծգնաժամի մէջ դա շատ ուրախալի բան է, որ Ներսէսը կը մնայ պատրիարքական աթոռի վրա, որ կրկին նա կը ղեկավարի հայոց խընդիրը, որ այդ ամենքից սիրված և փորձված մարդը կը ներկայացնէ դարձեալ Թիւրքաց հայերի շահերը Բ. Դրան և Եւրոպայի առջև։

Դա կը լինէր ամենամեծ դժբաղդութիւն, եթէ Թիւրքաց հայերի համար այդ տեսակ ծանր, նշանաւոր և վճռողական րոպէում Ներսէս պատրիարքը յետ քաշվէր իր պաշտօնից, որ նա այդքան պատուով տարաւ երկար տարիների ընթացքում։

Աւելորդ է քննել այժմ թէ պատրիարքի ժամանակաւոր հրաժարականը ինչ պատճառներից առաջ եկաւ. արդեօք ազգային ժողովի ինտրիգաներն էին ստիպել Ներսէսին իր հրաժարականը տալու, թէ այդ հրաժարականը մի տեսակ բողոք էր Թիւրքաց կառավարութեան դէմ, որ վերջին ժամանակները աւելի և աւելի յամառութեամբ սկսեց անտես առնել իր հպատակ հայերի իրաւացի պահանջները, դիտմամբ մոռացութեան էր տալիս Հայաստանի վերանորոգութիւնների խնդիրը և արուեստական կերպով յարուցանում էր քիւրդերի շարժումը հայոց ինքնավարութեան հարցը կատարելապէս խեղդելու համար։ Գուցէ երկու պատճառներն էլ նշանակութիւն ունէին, բայց մեր կարծիքով վերջինը աւելի մեծ ազդեցութիւն ունեցաւ պատրիարքի վճռողական քայլի վրա։

Եւ ճշմարիտ, վերջին ժամանակները եւրեք եւրոպական պետութիւններից, որոնք ամենից շատ էին հոգում Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածի անյապաղ իրագործման մասին, Ռուսաստանը և Անգլիան ըզբաղված էին իրանց ներքին գործերով, իսկ Ֆրանսիան, Տունիսի պատերազմից առաջ ոչ թէ միայն չէզոք դիրք էր բռնել Թիւրքիայի վերաբերութեամբ, բայց մինչև անգամ սկսեց թշնամական կերպով վերաբերվել դէպի յունաց և չէրնօգօրիական խընդիրները, այդպիսով Թիւրքիայի կողմը պահելով։ Այժմ Անգլիան և Ռուսաստանը կրկին սկսում են ուշադրութիւն դարձնել Թիւրքաց Հայաստանի վերանորոգութիւնների խնդրի վրա, իսկ Ֆրանսիայի բարեկամական յարաբերութիւնները Բ. Դրան հետ սաստիկ խանգարվեցան։ Ֆրանսիան որ հաւատացած էր թէ կատարելապէս հաստատել է իր տիրապետութիւնը Ալժիրիայում, այժմ, երբ Ալժիրիայում ապստամբութիւն ծագեց, համոզվում է որ մահմետական աշխարհը երբէք չի ենթարկվի լուսաւորութեան ոյժին և քաղաքակրթութեան ազդեցութեանը, քանի որ Թիւրքիան գոյութիւն կունենայ։ Ֆրանսիան այժմ փոշմանված կը լինի Թիւրքիային իր տուած պաշտպանութեան մասին յունաց և չէրնօգօրիական հարցերի վճռելու ժամանակ։ Թող Ֆրանսիան համոզվի այժմ, որ ամբողջ աշխարհի մահմետականները միշտ խռովարար կը լինեն ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան դէմ, քանի որ կիմանան թէ Թիւրքիան գոյութիւն ունի, թէ Ստամբուլի մէջ նստած է Մահմետի յաջորդը, ամբողջ մահմետական աշխարհի մեծ խալիֆը, որ իր ձեռքի տակ անյաղթելի զօրքերն ունելով միշտ սպառնալի կարող է լինել գեաւուրների աշխարհի համար։ Մահմետականների բոլոր խռովութիւնները, նրանց բոլոր ապստամբութիւնները միշտ կատարվում են Ստամբուլի յոյսով։ Թող այդ բանի մէջ համոզվի Ֆրանսիան և զղջայ Թիւրքիային իր ցոյց տուած անզգոյշ բարեկամութեան մասին, որի համար նա օրինաւոր կերպով պատժվեց, ստիպված լինելով ճնշել զօրքերի ոյժով Ալժիրիայում ծագած ապստամբութիւնը։

Բոլոր վերոյիշեալ իրողութիւններից կարելի է եզրափակել որ ներկայ րոպէն շատ աջող է հայոց խնդրի լուծելուն։ Գլխաւոր պետութիւնների բարեկամական յարաբերութիւնները դէպի Թիւրքիան խանգարված են և յունաց ու չէրնօգօրիական խնդիրներից յետոյ հերթը հասաւ և հայոց խընդրին։

Այդ պատճառով ուրախալի է որ Ներսէսը կրկին կը լինի քաղաքական ներկայացուցիչ Թիւրքաց հայերի։

Գ. Ա.

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ պատմում են թէ այն լուրը որ իբր թէ դերասան պ. Ադամեան պայմանաւորվել է թատրոնական կոմիտեի հետ անցեալ տարվայ պայմաններով սխալ է։ Մեզ հաստատապէս հաւատացնում են որ այս տարի Ադամեանը 200 բուբլ ամսական և առաջին բենեֆիս պէտք է ստանայ, իսկ անցեալ տարի ստանում էր 150 բուբլ և վերջին բենեֆիս։ Ադամեանը կապել է նոր պայմանը յուլիսի 4-ին, իսկ պայմանագրի մէջ գրված է յունիս 1881 թ.։ Այն էլ պէտք է ասել որ Ադամեանի հին պայմանը կոմիտէտը նոյնպէս պահում է, ցոյց տալու համար կ. Պոլսի նոր դերասաններին որ Ադամեանի ռաճիկը չէ աւելացել, որպէս զի նրանք էլ աւելի չը պահանջեն։

—

ՄՕԶԴՈԿԻՑ մեզ գրում են։ «Շատ ժամանակ չէ այստեղ վախճանվեցաւ Մոսկվայի համալսարանի բժշկական բաժնի ուսանող Խաչատուր Լիսիցեան։ Հանգուցեալի ծնողները յանձն են առել իրանց որդու հոգու համար իւրաքանչիւր տարի նուիրել 25 բուբլ յօգուտ Միացեալ Ընկերութեան։ Թող օրինակ առնեն Մօզդոկի ծընողները։»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են որ այս տարի Ղազիաթին ու պատիւ պահանում է Բօժդեստվենսկուն, Պետերբուրգի Նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորին. ուսուցչական ժողովները ծագել են դպրոցական ձեռնարկների և գործիքների կաբինետի հէնց հիմնարկութեան օրից։ Այդ կաբինետը բաց է արած այն նպատակով, որ ուսուցիչները և ուսուցչուհիները միջոց ունենան օգտվել նրա մէջ ժողված գրքերից ու դպրոցական գործիքներից իրանց դասախօսութեան ժամանակ։ Բայց դիրեկտորի և ինսպեկտորների գիւղական դպրոցները այցելութիւն անելու ժամանակ նկատվել է, որ ուսուցիչներից շատերը չեն կարողանում օգտվել դպրոցական գործիքներից իրանց դասատուութեան ժամանակ, ուստի և ծագել է միտք ժողովել ուսուցիչներին և ուսուցչուհիներին, ցոյց տալ նրանց ընթերցանութեան և օրինակելի դասերի միջոցով դպրոցական զանազան գործիքների գործադրութիւնը ու նշանակութիւնը։ Բայց, ինչպէս այդ փորձը ցոյց տուաւ, ժողովները չէին կարող բաւականանալ միայն այդ նպատակով,—կարիքից ստիպված նրանք սկսեցին զարթեցնել այնպիսի հարցեր, որոնք արդէն չէին վերաբերում դպրոցական գործիքների բացատրութեանը, բայց որոնք զարթել էին ինքն ըստ ինքեան—դպրոցական կեանքի պրակտիկայով—և հետևապէս դրանք չէին էլ կարող մնալ անվճիռ. կամաց-կամաց զարթեցան այնպիսի անգամ հարցեր, որոնք ունեն իսկ տեսական բնաւորութիւն, այդպէս օրինակ,—«ուսուցչի ազդեցութիւնը գիւղական շրջանի վրա», կամ թէ—«արհեստների դասատուութեան մասին ժողովրդական դպրոցներում» և այլն։ Այսպիսով ժողովները կամաց-կամաց կորցրին իրանց սկզբնական բնաւորութիւնը, նոյնպէս և ընդլայնվեց պարապմանց շրջանը, իսկ ժողովների կազմակերպութիւնը մնաց մի և նոյնը—և նրանք չեն կարողանում հասնել իրանց նոր նպատակին և հէնց առաջվանն էլ շատ թոյլ է իրագործվում։ Բայց որպէս զի Պետերբուրգի Նահանգի ուսուցչական ժողովները աւելի արդիւնաւոր լինէին, նրանց կազմակերպութիւնը անկասկած պահանջում է բաւական փոփոխութիւններ։ Ահա այն բոլոր նկատողութիւնները, որ ունենք ասելու եղած ժողովի կազմութեան առիթով։ Նախ՝ շատ քիչ ժամանակ է տրվում ռեֆերենտներին ժողովներում կարդալու կամ խօսելու այն հարցերի մշակութեան համար, որոնք պիտի ենթարկվին ժողովի անդամց քննութեանը։ Երկրորդ՝ այն տեսակ հարցերի ընտրութիւնը, որոնք ժողովի քննութեանը պիտի ենթարկվին, լինում է առհասարակ առանց ժողովրդական ուսուցիչների գիտութեան և մինչև անգամ հարցերի մշակումը ուղղակի յանձնվում է ուսուցիչներից մի քանիսին։ Այն ինչ թեմաների ընտրութիւնը ժողովրդական (գիւղական) ուսուցիչների կողմից պիտի բոլորովին լինի ազատ, լրացնելով նրան այն հարցերով, որոնց մշակումը ու քննութիւնը կարևոր են համարում ժողովի առաջաւոր ու փորձառու անձինքը։ Բայց որովհետև յարուցած հարցերը բաւականի ուշադրութեան արժանի հարցեր էին ու նրանց մշակումը առաջարկած է եղել այնպիսի անձանց, որոնք չատ մօտիկ ծանօթ չէին այդ հարցերի հետ և այն էլ յանձնվել է մի քանի օր առաջ, մինչև ժողովի բացվելը, ուստի և շատ անգամ նրանց մշակումը եղել է շատ թոյլ ու սահմանափակվել է մեծ մասով ընդհանուր նկատողութիւններով. և չէր էլ կարելի սպասել կատարեալ մշակութիւն այն պարոններից, որոնք շատ կարճ ժամանակ են պարապել հարցի քննադատութիւնով։ Եթէ որ թեմաների ընտրութիւնը ազատ լինէր, այն ժամանակ մշակած կը լինէին հարցերը աւելի բազմակողմանի այնպիսի անձինք, որոնք աւելի մօտ ծանօթ են զարթեցրած հարցերի հետ ու բարեխղճաբար ուսումնասիրած նրանց գրականութիւնը։ Երրորդ՝ ժողովների առաջուայ կազմակերպութեան խիստ պահպանողութիւնը առաջ է բերել և մի ուրիշ անյարմարութիւն.—ուսուցիչների մի մասը ցոյց է տալիս իրան իբրև փորձառու մանկավարժներ, իսկ միւս մասը—անփորձ աշակերտներ։ Հէնց այդ պատճառով այդ երկու խմբերի մէջ ծագել են մի տեսակ թշնամական յարաբերութիւններ։ Գործերի այդ տեսակ ընթացքը առիթ է տուել մի քանի անձանց սաստիկ բարձր գնահատել իրանց աշխատանքը, դրդել է նոցա ընդունել մի տեսակ ինքնայոյս դրութիւն, մի տեսակ արհամարհանք դէպի իրանց միւս ընկերակիցները։ Կարելի է ասել, որ մինչև անգամ գիւղական և քաղաքային ուսուցիչների խառն ժողովը այնքան կանոնաւոր չէ կարելի համարել, ըստ որում դրանց և միւսների ինտերեսները բաւականի տարբեր են։ Բացի դրանից, ժողովներում քննութեան ենթարկվեցան այնպիսի հարցեր, որտեղ քաղաքային դպրոցների ուսուցիչները կարող են շատ քիչ օգուտ բերել, որովհետև նրանցից շատերը ծանօթ չեն գիւղական կեանքի պայմանների հետ, ապա ուրեմն և ժողովրդական (գիւղական) դպրոցների դրութեան հետ։ Այդ դէպքում աւելի յարմար է գիւղական ու քաղաքային ուսուցիչների համար զատ զատ ժողովներ կազմել։

Մեզ մնում է ցոյց տալ այստեղ միայն այն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

—

Ներկայ տարուոյս Ջրօրհնէքի արձակուրդներին տեղոյս Վլադիմիրեան կոչված քաղաքային դպրոցի ընդարձակ դահլիճում կայացաւ Ս. Պետերբուրգի Նահանգի գիւղական ուսուցիչների և ուսուցչուհիների ժողով։ Ժողովի նպատակն էր ցոյց տալ ուսուցիչներին և ուսուցչուհիներին այն բոլոր դասական և ուսումնական ձեռնարկները և գործիքները, որոնք պատրաստած էին ուղարկվելու Մոսկվայի գեղարուեստա-արդիւնագործական հանդիսին ու մի և նոյն ժամանակ, օգտվելով ուսուցիչների և ուսուցչուհիների ցուցմունքներով ու նկատողութիւններով, լաւացնել ու փոփոխել դասական առարկաների ընտրողութիւնը, որքան այդ կարելի կը լինի։ Բացի դրանից, այդ ժողովում զարթեցան նոյնպէս և զանազան հարցեր, այդպէս օրինակ շարժական թանգարանի (подвижной музей), անգրագիտութեան առաջն առնելու ու ժողովրդական դպրոցներում արհեստներ մոցնելու մասին։ Թէ որքան այդ ժողովը հասաւ իր նպատակին—այդ կարելի է նկատել յօդուածիս վերջում, իսկ այժմ աւելորդ չենք համարում Պետերբուրգի Նահանգի ուսուցչական ժողովների ակզբնաւորութեան մասին ասել մի քանի խօսք։ Այդ ժողովների ինիցիատիվն ու պատիւ պահանում է Բօժդեստվենսկուն, Պետերբուրգի Նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորին. ուսուցչական ժողովները ծագել են դպրոցական ձեռնարկների և գործիքների կաբինետի հէնց հիմնարկութեան օրից։ Այդ կաբինետը բաց է արած այն նպատակով, որ ուսուցիչները և ուսուցչուհիները միջոց ունենան օգտվել նրա մէջ ժողված գրքերից ու դպրոցական գործիքներից իրանց դասախօսութեան ժամանակ։ Բայց դիրեկտորի և ինսպեկտորների գիւղական դպրոցները այցելութիւն անելու ժամանակ նկատվել է, որ ուսուցիչներից շատերը չեն կարողանում օգտվել դպրոցական գործիքներից իրանց դասատուութեան ժամանակ, ուստի և ծագել է միտք ժողովել ուսուցիչներին և ուսուցչուհիներին, ցոյց տալ նրանց ընթերցանութեան և օրինակելի դասերի միջոցով դպրոցական զանազան գործիքների գործադրութիւնը ու նշանակութիւնը։ Բայց, ինչպէս այդ փորձը ցոյց տուաւ, ժողովները չէին կարող բաւականանալ միայն այդ նպատակով,—կարիքից ստիպված նրանք սկսեցին զարթեցնել այնպիսի հարցեր, որոնք արդէն չէին վերաբերում դպրոցական գործիքների բացատրութեանը, բայց որոնք զարթել էին ինքն ըստ ինքեան—դպրոցական կեանքի պրակտիկայով—և հետևապէս դրանք չէին էլ կարող մնալ անվճիռ. կամաց-կամաց զարթեցան այնպիսի անգամ հարցեր, որոնք ունեն իսկ տեսական բնաւորութիւն, այդպէս օրինակ,—«ուսուցչի ազդեցութիւնը գիւղական շրջանի վրա», կամ թէ—«արհեստների դասատուութեան մասին ժողովրդական դպրոցներում» և այլն։ Այսպիսով ժողովները կամաց-կամաց կորցրին իրանց սկզբնական բնաւորութիւնը, նոյնպէս և ընդլայնվեց պարապմանց շրջանը, իսկ ժողովների կազմակերպութիւնը մնաց մի և նոյնը—և նրանք չեն կարողանում հասնել իրանց նոր նպատակին և հէնց առաջվանն էլ շատ թոյլ է իրագործվում։ Բայց որպէս զի Պետերբուրգի Նահանգի ուսուցչական ժողովները աւելի արդիւնաւոր լինէին, նրանց կազմակերպութիւնը անկասկած պահանջում է բաւական փոփոխութիւններ։ Ահա այն բոլոր նկատողութիւնները, որ ունենք ասելու եղած ժողովի կազմութեան առիթով։ Նախ՝ շատ քիչ ժամանակ է տրվում ռեֆերենտներին ժողովներում կարդալու կամ խօսելու այն հարցերի մշակութեան համար, որոնք պիտի ենթարկվին ժողովի անդամց քննութեանը։ Երկրորդ՝ այն տեսակ հարցերի ընտրութիւնը, որոնք ժողովի քննութեանը պիտի ենթարկվին, լինում է առհասարակ առանց ժողովրդական ուսուցիչների գիտութեան և մինչև անգամ հարցերի մշակումը ուղղակի յանձնվում է ուսուցիչներից մի քանիսին։ Այն ինչ թեմաների ընտրութիւնը ժողովրդական (գիւղական) ուսուցիչների կողմից պիտի բոլորովին լինի ազատ, լրացնելով նրան այն հարցերով, որոնց մշակումը ու քննութիւնը կարևոր են համարում ժողովի առաջաւոր ու փորձառու անձինքը։ Բայց որովհետև յարուցած հարցերը բաւականի ուշադրութեան արժանի հարցեր էին ու նրանց մշակումը առաջարկած է եղել այնպիսի անձանց, որոնք չատ մօտիկ ծանօթ չէին այդ հարցերի հետ և այն էլ յանձնվել է մի քանի օր առաջ, մինչև ժողովի բացվելը, ուստի և շատ անգամ նրանց մշակումը եղել է շատ թոյլ ու սահմանափակվել է մեծ մասով ընդհանուր նկատողութիւններով. և չէր էլ կարելի սպասել կատարեալ մշակութիւն

բաբաղում հացը առատ է և մեծ գումարով ցորեն գնողներն էլ կան։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են։ «Մինչև որ հայոց դպրոցը Թշուառ դրութեան մէջ է և երեի չուտով կը փակվի, քաղաքում բացվելու է բէալական դպրոցը երեք դասատներով։ Բաւական աշակերտներ կան, որոնք անհամբեր սպասում են նրա բացվելուն։ Բացի սրանից բացված է քաղաքային դպրոցի կից մի արհեստական դասարան, որի համար կառավարութիւնը տալիս է 500 ր. տարեկան, իսկ անտառապետը ձրի ատաղձ է տալիս։ Արդէն ստորագրութիւն է բացված և ներկայացումներ են տրվում յօգուտ այդ դասարանի։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Գաւառական բոլոր հայոց դպրոցները մի չորս հինգ տարուց յետոյ փոքր առ փոքր կը փակվեն, որովհետև Էջմիածինը մեր գաւառական դպրոցների բոլոր եկամուտները փոքր առ փոքր առնում է և կենտրոնացնում է վանքի մէջ։ Այդպիսով Էջմիածնի նպատակն է որ քիչ ժամանակից յետոյ Անդրկովկասի մէջ ոչ մի հայոց դպրոց չը լինի, բացի Էջմիածնի ճեմարանից։ Իսկ մեր հայոց երիտասարդութիւնը ստիպված կը լինի ուսում առնել միմիայն պետական դպրոցներում, երբ ազգային դպրոցները, Էջմիածնի չնորհով, բոլորն էլ կը փակվեն։ Արդէն Երևանի և Շուշու ղեղրոցները սկսում են ենթարկվել այդ վիճակին. հերթը կը գայ և այլ դպրոցներին և Ներսիսեան դպրոցին։»

—

Հինգշաբթի, յուլիսի 16-ին Արծրունու թատրոնում մասնակցութեամբ Ա. Ցակոբեանի յօգուտ պ. Աղայեանի կը ներկայացնվի «Սէր և նախապաշարմունք» կոմ. 3 արար. թարգ. Ա. Բաբանեանի և զաւեշտ։ Սկիզբն է $8^1/_2$ ժամին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրների մէջ հրատարակված է համայնքների ժողովի անդամ՝ յայտնի Բրէդլոյի և Գլադստոնի դրագրութիւնը առաջինի յայտնութեան առիթով, որ նա մտադիր է իր տեղը բռնել համայնքների ժողովի մէջ և մասնակցել նրա նիստերին։ Եթէ Բրէդլօ կը գայ իր կուսակիցների հետ, վերջիններին չեն թոյլ տայ մտնել պարլամենտի բակը, իսկ Բրէդլօին կը թողնեն մտնել պարլամենտի անցքերի մէջ, իսկ դահլիճը ներս չեն թողնի։ Պարլամենտականն ոստիկաններին օգնելու համար պոլիցիականներ են հրաւիրված։

Պարլամենտի անդամներից շատերը չափազանց անբաւական են, որ Վինդզորի պարկի վերակացու իշխան Խրիստիան վերջին զօրախաղի ժամանակ պարլամենտի անդամների համար առանձին տեղեր չը պատրաստրեց։ Համայնքների ժողովի անդամներից մի քանիսը ժողովի մէջ այդ առիթով յարձակվեցին ոչ թէ միայն կառավարութեան, այլ և թագաւորական տան անդամների վրա։

Մայս կոմսութեան մէջ երկու կալուածատէրերի վրա հրացան արձակեցին։ Երկուսն էլ վիրաւորված են՝ մէկը թեթև, իսկ միւսը մահացու կերպով։ Յանցաւորները կալանաւորված են։

ՀԱՅՔ ԵՒ ՑՈՅՆՔ

—

Մայրաքաղաքիս Ցոյն հասարակութեան գլխաւոր լրագիրը՝ Ն է ո լ ո գ ո ս՝ որ ամբողջ թիւրքիոյ մամլոյն ալ գլխաւոր զարդերէն մին է, Պատ. Տ. Տիմիթրիոս Զոլաքիտիսի վերջին աշխատութեան վրայ, զոր անցեալ օր ծանուցինք, հետևեալ խորհրդածութիւնն հրատարակած է, յորում համակրալից դիտողութիւններ կան Հայոց և Ցունաց յարաբերութիւններուն վրայ։

„Պ. Տ. Զոլաքիտիսի ըստ ամենայնի կարևոր և նոր գործն, որոյ վրայ մեր պաշտօնակիցք նախ քան զմեզ գրեցին, մեծ պատիւ կը բերէ թէ՛ աշխատասիրողին և թէ՛ մեր համազգի հասարակութեան, որ ուշի ուշով ընթեռնլով զայն, կրնայ այսուհետև ոստնակոխ ընել ոչիտութենէ ծագած նախապաշարումներն, որք՝ որոմանց նման՝ խառնուելով հին ժամանակաց աստուածաբանական աւելորդ անրջաբանութեանց, հերձուածներ յառաջ բերին և եղբայր ազգեր բաժանեցին. ազգեր, որք նախ քան զՔրիստոնէութիւն մաքառած չէին բնաւ ընդ միմեանս, և որք՝ կը թուի թէ՛ սահմանեալ էին սիրոյ Աւետարանին գալուստէն յետոյ մարտնչիլ իրարու հետ այնպիսի գաղափարաց համար, որք դարուց ի դարս անմեկնելի մնացած են և պիտի մնան յաւիտեան։

„Այսօր՝ ամենքս կը զարմանամք՝ Հայք և այլ Ուղղափառք, թէ ո՛րպիսի այլանդակ պատճառաւ չեմք միացեալ, քանի որ միջնորմ մը չենք տեսներ ընդ մէջ, իբր ո՛ և է պատճառ, և եղածն ալ փտած և ոչինչ իսկ է։ Մեր Հայ եղբարք կը կարծուին ցարդ իբր դաւանողք զմի բնութիւն, սակայն այս հակառակամարտ վիճին մէջ այնքան նրբութիւն կայ, որ ցարդ իսկ ո՛չ աստուածաբանական հանճարն և ո՛չ այլ զրաբանութիւնք կարող չեղան բացատրել այս նրբութեան մեկնիչ սահմաններն, և բաժանումը՝ թէև կայ՝ սակայն բոլորովին անհասկանալի է անոնց, որք իրերը կը քննեն պատմական, գործնական, դրական և աւետարանական օգտակար տեսակէտով մը։

„Հայկական Եկեղեցւոյ Ս. Մկրտութեան Կանոնաց ընթերցումն ուրախացուց միանգամայն և վշտացուց զմեզ. մի կողմանէ, մինչև յարտասուս փղձկեցանք այս արարողութեան վսեմութեանն և մերինին հետ նորա ճիշդ նոյնութեան վրայ, և միւս կողմէ, դարձեալ մինչև յարտասուս վշտացանք, որ հին դարու մի անմտութիւնը բաժանեց այսպէս զմեզ այն ազգէն, որոյ անունն ու պատմութիւնը բերկրութեամբ կընթեռնունք և իբրև պարտք կուսնինք՝ Քրիստոսէն առջի մեր անմահ հարց մատենից մէջ։

„Հայոց Ս. Կաթուղիկոսին ընդ Բիւզանդիան կայսեր գրակցութիւնը, զոր այս առաջին անգամ մեր լեզուին թարգմանուած կը տեսնենք և հելլենական այնքան բառից կիրառութիւնն Հայոց Եկեղեցւոյն մէջ՝ այնպէս սերտիւ կը զոգեն զմեզ մեր Հայ եղբարց հետ, որ միութեան ժամուն սպասող ո՛չ ոք կարէ սպասել այլ ևս (զի արդէն իսկ է այդ ժամանակը). վասն զի Հայք չեն այն ազգերէ, որք կրնան կարծել թէ երջանիկ են պատմութիւն չունենալով. ընդհակառակն՝ երջանիկ են նոքա, զի ունին պատմութիւն։ Երանի՜ թէ Եւրոպիոյ և կայսերական պատկառելի կառավարութեան կողմէ մտադրեալ բարենորոգումներէն և ընդհանուր Արևելից խաղաղութենէն յետոյ, պաշտօնապէս հնչէր սերտ եղբայրակցութեան ժամն, որոյ գալուստն յաջողապէս կաւետեն այնպիսի բանասիրական և պատմական երկեր, որպիսիք են Պ. Տ. Զոլաքիտիսի և. նմանեաց երկասիրութիւնք։»

(Մասիս)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 3 յուլիսի

Այս անգամ էլ մի քանի խօսք մեր այլակրօն համարիւնների վրա։ Հեռագիրներից գիտէք արդէն, որ Հասունի տեղը ընտրվեց պատրիարք-կաթուղիկոս Ազարեանը. հայ-կաթոլիքների այս ընտրութեան մասին կարելի է միայն յիշել առածը՝ промѣнять кукушку на ястреба. Սա թէպէտ ազգաւ զուտ հայ է, բայց հոգով և համոզմունքներով աւելի մոլեռանդ, աւելի եզուիտ, աւելի ազգատեաց քան թէ քաղդէացի Հասուն կարդինալը։ Հերիք է բերել միայն հետևեալ հանդիսաւոր կերպով արտասանած խօսքերը, ցոյց տալու համար թէ ինչ տարած է տաճկահայ կաթոլիկների նոր առաջնորդը. «Հայոց ազգը միշտ եղել է կրօնական ազգ (?!), մանաւանդ նա պիտի մնայ այժմ և այսուհետև խստիւ կրօնական, վասնորոյ ես ոչ կարող եմ ինքս հասկանալ և ոչ ձեզ հասկացնել թէ ինչ ասել է հայկական ինքնօրէն վարչութիւն և այլն»։ Ահա ինչպիսի ճառով (ի հարկէ թիւրքերէն լեզուով) պատուեց իր ստորադրեալների ժողովը նորընտիր հայ եզուիտ-կաթուղիկոսը։ Ուրեմն սորանից յետ քսան տարի չանցած կը տեսնենք, որ Կ. Պոլսի յիսուն հազար հայ կաթոլիքները կը դաղարեն իրանց հայ կոչել, ասվելով լատին, արաբ, եգիպտացի, բայց ոչ հայ։ Ի՜նչ ոչխարային յատկութիւն ունեն բանականութիւն ունեցող արարածները ևս. մի հատ անպիտան և կեղտոտ եզուիտ կարող է պղծել ամբողջ մի հօտ...

Ի՞նչ կասէք արդեօք եթէ ցոյց տամ, որ այսպիսի մի եզուիտ, փոխանակ ըստ արժանոյն գնահատվելու այստեղի հայ մամուլից, նա միայն վառ և ոգևորված ներբողներ է ստանում. ինչ է պատճառը—Ազարեանի տուած փարան. փարայով կարող էք առնել այստեղ որչափ քանակութիւն ուզէք խիղճ, պատիւ, համոզմունք, համակրութիւն և այլն։ Այսպիսի մամուլով հնարին է արդեօք ազգային ժողովին կամ որ և է ընկերութեան մի քայլ յառաջադիմութիւն ա-

---

պատճառներից մէկը, որ ունեցել է քիչ թէ շատ նշանակութիւն առաջուայ ժողովների տուած անենչան օգուտների վրա, այդ այն է, որ ժողովների պարապմանց ցուցակը ուղարկվելիս են եղել դիւղական ուսուցիչներին շատ ուշ և հետևապէս նրանք նոյնպէս շատ քիչ ժամանակամիջոց են ունեցել նախապէս մտածելու առաջարկած հարցերի վրա. իսկ կարդալ ինչ և իցէ լաւ պատրաստվելու համար—բոլորովին անկարելի է։

Զարթուցած հարցերի քննադատութեան համար պատրաստականութիւն չունենալու պատճառաւ, վէճերը ժողովներում եղան առանց որ և իցէ սիստեմայի, անդադար անցնելով մի հարցից դէպի միւսը. այդ պատճառով և ժողովի անդամները չեկան մի որոշեալ հետևանքի. իսկ նկատողութիւններ եղան շատ քիչ. զարթուցած հարցերի քննութեան համար շատ քիչ ժամանակ էր որոշված։ Յայտնելով այդ նկատողութիւնները ժողովների կազմակերպութեան վերաբերմամբ, դառնամ այժմ ուսուցչական ժողովի պարապմանց ընթացքին։

Յունվարի 2-ին, ժողովրդական դպրոցների դիրեկտորի մի համառօտ ճառից յետոյ, որով նա ցոյց տուաւ ներկայ ժողովի նպատակը, Պետերբուրգի քաղաքային դպրոցների ուսուցիչներից մէկը կարդաց իր բէֆերատը դասական այն բոլոր ձեռնարկների և գործիքների մասին, որոնք գործ են ածվում Ուշինսկու Родное слово-ի ա. տարին անցնելու ժամանակ։ Բէֆերենտը իր զեկուցման մէջ նախ և առաջ յայտնեց այն միտքը թէ՝ գրագիտութեան որ եղանակներն են աւելի գործածական և դրանցից որը կարելի է աւելի յարմարագոյն համարել։ Բէֆերենտի կարծիքով աւելի յարմարն է սենտետիքական եղանակը. այդ եղանակով յօրինած են արդէն շատ դասագրքեր և դրանց ընտրութեան մէջ ուսուցիչը բոլորովին ազատ է։ Բէֆերենտը կանգ առաւ միայն երեք դասագրքերի վրա—Պաուլսոնի, Ուշինսկու ու Բունակովի։ Այդ դասագրքերից նա աւելի յարմարագոյնն է համարում Ուշինսկու դասագիրքը։ Պաուլսոնի դասագիրքը նրա կարծիքով չէ կարելի բոլորովին բաւականացուցիչ համարել, որովհետև դասատուութեան ժամանակ անկարելի է պատշաճաւոր ընտրողութիւններ անել դասական գործիքների մէջ. իսկ Բունակովի դասագիրքը բոլորովին նման է Ուշինսկու դասագրքին։ Բացի դրանից, Բունակովի թոյլ կողմը կայանում է նրա մէջ, որ նախ և առաջ երեխայոց նա ծանօթացնում է միայն 12 տառերի հետ ու վարժութեան համար այնպիսի բառեր է հնարում, որոնք անմատչելի են երեխայոց հասկացողութեանը ու մի և նոյն ժամանակ հնարած բառերի մէջ չը կայ ներքին կապ։ Այնու ամենայնիւ, նա մի և նոյն ժամանակ այդ բոլոր թերութեանց հետ Բունակովի դասագրքի մէջ գտնում է այնպիսի արժանաւորութիւններ, որոնցից զուրկ է Ուշինսկու դասագիրքը, այն է՝ առաջնում խօսակցութիւնները լինում են առարկայական—առարկաների միջոցով, իսկ երկրորդումը — պատկերների, նկարների միջոցով։ Բունակովի դասագրքի անյարմարութիւններից մէկն էլ այն է, որ նրա դասագիրքը վերջացնելուց յետոյ ստիպված ես լինում անցնել Ուշինսկու «Родное слово» դասագրքին։ Բէֆերենտը իր զեկուցումը եզրափակեց նրանով թէ՝ գրագիտութիւնը պիտի անցնել Ուշինսկու գրքով։ Կանգ առնելով Ուշինսկու դասագրքի վրա, նա սկսեց թուել այն գործիքները ու ձեռնարկները, որոնք անչուշտ կարևոր են «Родное слово» ա. տարին անցնելու ժամանակ։ Բէֆերենտի կարծիքով բոլոր մինչև այժմ հրատարակած ձեռնարկներից ոչ մէկը չէ կարող կատարեալ կերպով բաւականութիւն տալ Ուշինսկու պրոգրամմային։ Ձեռնարկների ու գործիքների մի յարմար կոլլեկցիա կազմելու համար ստիպված են եղել շատ զգոյշ ընտրողութիւններ անել նրանց զանազան հրատարակութիւններից և մինչև անգամ մասամբ նորից կազմել։ Այն ժողովածուի մէջ, որ պատրաստած է եղել Մոսկվայի հանդիսի համար, մտել են Զամիսլովսկու, Դաշէտի, Վիլկէի, Շրէյբերի, Լէյտիմանի, Ֆէնուի և Вольно-Экономическое общество-ի հրատարակած նկարները։ Մի և նոյն ժամանակ Բէֆերենտը նկատեց թէ՝ նկատողական դասատուութեան ժամանակ աւելի լաւ է և յարմար նկարներ գործ ածել, քան թէ առարկաներ։

Դորանից յետոյ կարդացվեցաւ և մի բէֆերատ այն գործիքների մասին, որոնք գործ են ածվում Ուշինսկու «Родное слово» բ. տարին անցնելու ժամանակ։ Նախ և առաջ Բէֆերենտը յայտնեց այն միտքը թէ՝ հարկաւոր է արդեօք Ուշինսկու գրքից զատել այն բոլոր յօդուածները, որոնք վերաբերում են աշխարհագրութեանը (міровѣдѣніе» և դրանց անցնել բոլորովին առանձին, որպէս զի դրանցով կարելի լինի աշակերտաց հաղորդել բէալական գիտութիւններ, թէ անցնել դրանց բացատրական ընթերցանութեան հետ միասին։ Բէֆերենտի կարծիքով այդ յօդուածները պիտի կարդացվեն միասին։ Այնուհետև նա անցաւ այն գործիքների քննադատութեանը, որոնք գործ են ածվում Родное слово-ի բ. տարին անցնելու ժամանակ։ Նրա կարծիքով իբրև գործիքներ Родное слово-ի բ. տարուայ համար—կարող են համարվել նկարներ, բայց մի քանի դէպքերում իբրև գործիքներ կարող են համարվել նոյն իսկ առարկաներ, նա մանաւանդ այն յօդուածների ընթերցանութեան ժամանակ, որտեղ բացատրվում է որ և իցէ մի արտադրութիւն, օրինակի համար, «какъ рубашка выросла въ полѣ»։

Այնուհետև Բէֆերենտը սկսեց խմբագրել Ուշինսկու գրքի բոլոր յօդուածները, բացատրել դրանց իւրաքանչիւր խումբի ընդհանուր միտքը և ցոյց տուաւ թէ աշխարհագրութիւնից որպիսի տեղեկութիւններ կարելի է հաղորդել այդ յօդուածներովը։ Վերջապէս նա կարդաց մի ցուցակ այն գրքերի, որոնց կարելի է տալ աշակերտաց կարդալու այդ տարում և որոնցից կարող է օգտվել ինքն ուսուցիչը։

Մենք չը պիտի մի առ մի թուենք այստեղ այն բոլոր գործիքները, որոնց առաջարկում էին երկու բէֆերենտները, որովհետև բոլորը առանց բացառութեան չէ կարելի համարել բաւականացուցիչ ու մինչև անգամ հարկաւոր, իսկ երրորդ այն պատճառով, որ այդ տեսակ ժողովածուի սաստիկ թանգութեան պատճառով անհատի չելի է մի համեստ ժողովրդական դպրոցի (այն բոլոր ձեռնարկները, գործիքները, որոնք զրվված են Родное слово-ի ա. և բ. տարիների ընթերցանութեան համար, 400 ռուբլուց աւել փող արժէ)։ Իսկ ինչ վերաբերում է դպրոցական գործիքների դասաւորութեանը, ցաւակցաբար պիտի ասել, որ բեպետիցիոնական հանդէս բացատողները չը կարողացան դրանց այնպէս ժողովել ու կարգի բերել, որ կարելի լինէր տալ մի պարզ հասկացողութիւն minimum-ի կամ

նել, երբ այս մամուլն է, որ ապականում է մըտքերն ու զգացմունքը։

Ազարեանից ոչ պակաս անպիտանը հայ-բողոքականների կաթուղիկոսութիւնը փնտրող յայտնի Բոյեաջեանն է. այս արարածն է, որը ըստացաւ նորերս Թիւրքիայից մի մեծ պարգև նորա համար, որ նա կարողացաւ ցոյց տալ Սայիդ-փաշային զանազան հնարքներ Դիարբեքիրից Աբեղին-փաշայի ձեռքով այստեղ ուղարկած 52 քիւրդ բէյերին ազատելու։ Որովհետև Բոյեաջեանը ինքը Դիարբեքիրի առաջնորդն է, վանորոյ նորա սովորացրած ճանապարհները և տուած վկայութիւնները կարողացան լինել փրկութիւն հարիւրաւոր հայ ընտանեաց դահիճ քիւրդերի համար։ Ցեսնելով այս ամենը մարդ երբէմն մնում է մոլորված, ինքը իրան հարցնելով. «միթէ այս ազգը կարող է վերականգնել, երբ նորա զարգացած անդամները այսչափ ապականված են»։ Անգլիայից կը դայ մի նոր միսիոնար, նորա գիրկը ընկնող առաջի մարդը հայ պիտի լինի. Ամերիկայից կը դան քարոզիչներ՝ նոյնը. Հռոմից կուղարկվին այստեղ եզուիտներ Հայաստանի մէջ հաստատվելու համար, նոցա հիւրընկալողները և հայերէն սովորացնողները այստեղ հայեր են. այս ինչ դեսպանին, այն ինչ մարդուն լրտես և աղգուրաց գործիք է հարկաւոր,—անշուշտ այդպիսինը պիտի հայ լինի. դա ինչ թշուառութիւն է մի խեղճ ազգի համար, Տէր Աստուած... Իսկ ո՞վ կարող է լինել ազգի միակ բարերարը և պահպանող հրեշտակը այսպիսի դէպքերում, եթէ ոչ մամուլը և նորա սթափեցուցիչ ազդեցութիւնը. բայց ո՞ւր է նա և ինչ է....

Ահա այսպիսի ճգնաժամի մէջ է գտնվում ազգը, երբ մի խումբ դաւաճանների մի անպիտանի առաջնորդութեամբ ստորերկրեայ ինտրիգներ են անում այստեղի ազգային ժողովի մէջ Ներսէս պատրիարքին տապալելու և նորա տեղը իրանց շահերին գործիք և հլու հպատակ ընտրելու համար։ Երևակայեցէք Ներսէսի համբերութիւնը, երբ նոյն անձն ամեն կեղտոտութիւններ անելով, երեսանց Ներսէսին բարեկամ է ձևանում և պատուիրակ ընտրվելով խնդրում է նորան իր պաշտօնի վրա մնալու։ Ճշմարիտ, տեսնելով այսչափ նենգութիւն և կեղծաւորութիւն այս մարդիկների ընաւորութեան և գործերի մէջ, մարդու միտքը դալիս են հետևեալ մըտքերը.—հայոց հարցը յաջողութեամբ լուծվելուց յետ, առաջարկել կանգնացնել Հայաստանում մօտ առ մօտ երկու արձան. մէկը մարմարիօնից Ներսէս պատրիարքին, միւսը փտած փայտից այստեղի ազգային ժողովին, որը չը նայելով Սօսիւնի նմանների մշտական հիացմունքին, հազիւ արժանի է միայն այդպիսի մի յիշատակարանին իր քսան ու մէկ տարուայ գործունէութեան համար...

Կ. Պոլսի Հայերը այնչափ տգէտ և անկարող ա-ռարածներ են, որ նորերս «ատենաբաններից» մինը ասում էր. «չատ լաւ, դիցուք թէ Հայաստանը տնտեսապէս ուսումնասիրեցինք և իմացանք նորա պակասութիւնները, դորանից յետ ինչ պիտի անենք»։ Ցեսնք թէ որչափ կուրօրէն և խարխափելով են գործ տեսնում սոքա, ո՛րչափ անընդունակ են գործնականապէս մի բան յառաջացնելու, որ երբ մտածում են թէ կարող են երես առ երես հանդիպել իրական Հայաստանի հետ, այնչափ խորթ է սոցա համար այդ իրական երկիրը, որ բոլորովին բնականապէս հարց են առաջարկում. «լաւ, դիցուք թէ տեսանք իրական Հայաստանը, հապա ինչ պիտի անենք յետոյ»։ Ահա ինչ կը նշանակէ ոչ խելքով և դատողութեամբ ապրել և գործել, այլ միայն երևակայութեամբ և եռանդով։ Երբ որ մի մարդուն, ծեր թէ պատանի, կը սկսեն գովել այս տեղ, միշտ կասեն միայն թէ՝ նա խիստ վառվռուն և եռանդով մարդ է։ Այդ է պատճառը, որ երբ մէկին մի աննպաստ դիտողութիւն կանես միւսի համար, քեզ կասեն. «աղբար, նա պօյետ է»։ Այսպիսով յայտնվում է, որ այստեղ ամենքն էլ պօյետ են, բայց թէ պօյետները միասին հաւաքված ինչ մի ուշադրութեան արժանի երկտող բանաստեղծութիւն գրեցին՝ այդ մասին մի հարցնէք։ Ուրեմն երբ Կ. Պոլսի գործիչները բաղկացած են այսպիսի ֆանտազիօրներից, միթէ Մշակը իրաւացի չէր դրօչմելով սոցա միշտ «ռոմանտիկ», «դարդակ» և «անպէտք» անուններով. թող խոսէ սոցա ամենքի հարազատ տիպար պ. Սօսիւնը, որը սիրում է այդչափ նիսիա փիլիսոփայութիւններ անել.... խոսելով «յանուն Վիկտոր Հիւգոյի»....

Թէ որչափ ինիցիատիվից զուրկ են սոքա, ահա մի թարմ օրինակ եւ. տեղիս հայ լրագիրներից մինը արտատպելով Մշակից Պետերբուրգում կազմվող ընկերութեան համար Հայաստանի քարտէզը, թէ չը գիտեմ ինչը չմնել տալու համար, ասում է. «ինչ կը լիներ, որ մեր մէջ էլ (Կ. Պոլիս) կազմվէր այդպիսի մի ընկերութիւն հայոց մեծ պատմութիւնը գրելու համար»։ Մէկը ասէր, միթէ քիչ պատմութիւններ են գրվել և քիչ հատոր լցվել փտած անցեալով, բայց ով է ձեռնարկել մի քննադատական բան գրելու հայոց պատմութեան վրա. եթէ կարծում են թէ Հայաստանի տնտեսական ճիշդ վիճակագրութիւն և ուսումնասիրութիւն անելը «դեռ ես մի աւելորդ բան է», գոնէ առաջարկէին ընկերութիւն կազմել քննադատական պատմութիւն գրելու համար։ Բայց ում կասես այսպիսի բաներ. սուրիչը։ Սա իր զեկուցման մէջ նախ և առաջ ցոյց տուաւ այն նպատակը, որպիսին նայում է ժողովուրդը ընթերցանութեան վրա ներկայացնել։ Ժողովուրդը գրքի մէջ փնտռում է կամ հետաքրքրական մի բան, կամ թէ նայում է նրա վրա կրօնական կէտից. բայց նա չէ նայում նրա վրա իբրև մի ուսուցչի, մի առաջնորդողի վրա, բայց այն ինչ դպրոցը պիտի աշխատի ձգտել այդ վերջինիս։ Այդ տեսակէտից նայելով Ռէֆերենտը ասաց թէ այդ նպատակին ամենից աւելի կարող են բաւականութիւն տալ այն բոլոր բնական գիտութիւններին վերաբերեալ յօդուածները, որոնք գտնվում են Ուշինսկու «Родное слово годъ 3-й» գրքի մէջ։ Կենդանիների վրա խոսելու կամ պատմելու ժամանակ, Ռէֆերենտի կարծիքով, պիտի ունենալ երկու նպատակ— գիտական ու տիպնիբական։ Կենդանիների վրա խոսելու ժամանակ գիտական նպատակով պիտի ցոյց տալ թէ կենդանու գործարանների կազմութիւնը ինչ կապ ունի նրա կեանքի հետ և ինչ ընդհանուր իդէա կայ կենդանիների գործարանների կազմութեան մէջ։ Տեխնիքական նպատակը նկատի ունի ցոյց տալ այն օգուտը, որ կարելի է ստանալ այս կամ այն կենդանուց։ Վերոյիշեալ յօդուածների ընթերցանութեան ժամանակ, Ռէֆերենտի կարծիքով, պիտի գործ ածել հետևեալ գործիքները,—կենդանիներ անցնելու համար — նկարներ, իսկ աւելի լաւ է — եթէ կայ կարողութիւն — կենդանիների չուչելաններ. իսկ անկարանութիւնից անչուշտ, նա մանաւանդ կուրսի սկզբներում, տունկերի թարմ ու կենդանի օրինակներ։ Նկարները այդ դէպքում նշանակութիւն չունեն, որովհետև նրանք չեն տալիս իսկական գաղափար տունկերի մեծութեան մասին, ըստ որում այդ վերջիններս նկարված են լինում առհասարակ մեծ դիրքով։ Եւ միայն յետոյ, երբ աշակերտները կընտելանան տեսնել նկարի վրա տունկերի ձևակերպութիւնը մեծ դիրքով, այն ժամանակ անկարանութիւնը կարելի է աւանդել նրանց նկարներով։ Հանքաբանութիւն ուսուցանելու ժամանակ պիտի գործածել միայն այն հանքերի օրինակները, որոնց կարելի է գտնել նոյն իսկ տեղում, ի հակառակ դէպս չարժէ նրան և անցնել։ Վերջում Ռէֆերենտը կրկին նկատեց թէ՝ կենդանիները անցնելու ժամանակ չէ կարելի անցնել այն կարգով, ինչ կարգով հետևում են Ուշինսկու յօդուածները «Родное слово»-ի մէջ, այլ պիտի սկսել այն կենդանիներից, որոնք աւելի ծանօթ են երեխայոց։ Վերջապէս, բացի «Родное слово»-ի մէջ ամփոփած յօդուածներից, որոնք վերաբերում են բնութեան երևոյթներին, կարելի է աւելցնել դարձեալ և մի յօդուած չոգու ու չոգեկառքի մասին, որովհետև այդ տեղեկութիւնները կարող են ժողովրդի մէջ տարածված նախապաշարմունքները արմատախիլ անելուն փոքր ի շատէ նպաստել։

Փոքր ընդհատումից յետոյ բոլոր ձեռնարկներին ու գործիքներին այցելութիւն արին։ Այցելութիւնը այնպէս արագ եղաւ և այնպէս հարևանցի ու թեթև կերպով, որ աւելի նրա մասին չարժէ անդամ խոսել։

Դպրոցական ձեռնարկներին ու գործիքներին այցելութիւն անելուց յետոյ առաջարկութիւն եղաւ պ. պ. ուսուցիչներին և ուսուցչուհիներին, որ դրանք արտայայտեն իրանց նկատողութիւնները կարդացած ռէֆերատների առիթով։ Շարցը այդ տեսակ էր դրած.—ինչ է հարկաւոր ժողովրդական դպրոցում—նախ և առաջ պրոգրամմա կազմել, յետոյ իսկ յետոյ դասագրքի ընտրութիւն անել, թէ, ընդհակառակն, առաջուց դասագրքը ընտրել, իսկ յետոյ կազմել պրոգրամմա։ Այդ հարցի վերաբերմամբ բազմատեսակ կարծիքներ յայտնվեցան։ Վիճաբանութիւնները եղան առանց որ և իցէ սիստեմայի և յաճախ անցնում էին այնպիսի հարցերի, որոնք բոլորովին կապ չունեն իսկական հարցի հետ։ Վիճաբանութիւնների մէջ մասնակցեցան մի քանի ժողովրդական (գիւղական) ու քաղաքային դպրոցների ուսուցիչներ, նոյնպէս և մի ուսուցչուհի. այդ վերջինս յայտնեց այն միտքը թէ՝ դասագրքի ընտրութեան ժամանակ պիտի աչքի առաջ ունենալ այն նպատակը, ինչ նպատակ ունի ուսումը.—եթէ ի նկատի ունենք միմիայն գրագիտութիւն սովորեցնել, այն ժամանակ հարկաւոր է առաջ ընտրել դասագիրք, իսկ եթէ ի նկատի ունենք աշակերտաց դիտութիւններ աւանդել, այն ժամանակ հարկաւոր է նախ և առաջ պրոգրամմա կազմել, և ապա ընտրել դասագիրք։ Վիճաբանութիւնը այնքան երկար տևեց, որ միւս հարցերը բոլորովին չը քննադատվեցան։ Վերջում, այդքան վիճաբանութիւններից յետոյ, ժողովրդական դպրոցի դիրեկտորը դուրս բերաւ հետևեալ եզրակացութիւնը — «նախ և առաջ պիտի կազմել պլան, իսկ յետոյ ընտրել դասագիրք»։ Մենք կարծում ենք, որ աւելի լաւ է գործել ընդհակառակն, բայց մի և նոյն ժամանակ կարելի է լրացնել կամ փոփոխել, եթէ ուսուցիչները կարևոր կը համարեն։

(Կը շարունակվի)

maximum-ի այն ամեն բանի, ինչ որ կարևոր է կամ ցանկալի է տեսնել ժողովրդական դպրոցներում մայրենի լեզուի խելացի կերպով դասաւանութեան համար.— Նրանք տուին հանդիսատեսներին գործիքների ու ձեռնարկների անկանոն և անկարգ մի ժողովածու, որպիսին կարելի է գտնել Պետերբուրգի խանութներում, առանց պլանի, առանց մի ձեռնարկող իդէալի։ Չէր դարձրած ոչ մի ուշադրութիւն ժողովրդական դպրոցի համար նախ և առաջ այն բոլոր գործիքների վրա, որոնք գործադրվում են հայրենագիտութեան դասերի ժամանակ, այսինքն բնագիտութեան և աշխարհագրութեան դասերի ժամանակ. նոյնպէս և այն գործիքների վրա, որոնց կարող է ժողովել ու պատրաստել դպրոցի համար ուսուցիչն ինքը։ Այն ինչ բացատրվել է նկարների կարևորութիւնը ժողովրդական դպրոցներում, ցաւակցութիւն է յայտնվել, որ չը կայ ծախու դրամների կոլլեկցիա, յայտնվել են գանգատներ, որ չաջողվեց գտնել աղեղի մոդելը, ուստի և ստիպված են եղել նրան փոխարինել նկարով. շատ խոսեցան նոր նկարների մասին, թուեցին զանազան կոլլէկցիաներ, իսկ մանկավարժական և ուսման նշանակութիւնը ու նրանց գործադրութիւնը մնաց առանց բացատրութեան։ Առհասարակ չէ կարելի չը ցաւել, որ այդպիսի մի ազնիւ ու բարի գործ, որպիսին է դպրոցական գործիքների ու ձեռնարկների հանդէսը, շնորհիւ չը հասկացող և անփորձ անձանց դառնում է ժամանակի մի անպտուղ և անարդարելի կորուստ։

Իսկ այն բոլոր գործիքների համար, որոնք գործ են ածվում «Родное слово. годъ 3-й» գրքի ընթերցանութեան ժամանակ, խոսեց մի վրդական դպրոցում—նախ և առաջ պրոգրամմա կազմել, յետոյ իսկ յետոյ դասագրքի ընտրութիւն անել, թէ, ընդհակառակն, առաջուց դասագրքը ընտրել, իսկ յետոյ կազմել պրոգրամմա»։ Այդ հարցի վերաբերմամբ բազմատեսակ կարծիքներ յայտնվեցան։ Վիճաբանութիւնները եղան առանց որ և իցէ սիստեմայի և յաճախ անցնում էին այնպիսի հարցերի, որոնք բոլորովին կապ չունեն իսկական հարցի հետ։ Վիճաբանութիւնների մէջ մասնակցեցան մի քանի ժողովրդական (գիւղական) ու քաղաքային դպրոցների ուսուցիչներ, նոյնպէս և մի ուսուցչուհի. այդ վերջինս յայտնեց այն միտքը թէ՝ դասագրքի ընտրութեան ժամանակ պիտի աչքի առաջ ունենալ այն նպատակը, ինչ նպատակ ունի ուսումը.—եթէ ի նկատի ունենք միմիայն գրագիտութիւն սովորեցնել, այն ժամանակ հարկաւոր է առաջ ընտրել դասագիրք, իսկ եթէ ի նկատի ունենք աշակերտաց դիտութիւններ աւանդել, այն ժամանակ հարկաւոր է նախ և առաջ պրոգրամմա կազմել, և ապա ընտրել դասագիրք։ Վիճաբանութիւնը այնքան երկար տևեց, որ միւս հարցերը բոլորովին չը քննադատվեցան։ Վերջում, այդքան վիճաբանութիւններից յետոյ, ժողովրդական դպրոցի դիրեկտորը դուրս բերաւ հետևեալ եզրակացութիւնը — «նախ և առաջ պիտի կազմել պլան, իսկ յետոյ ընտրել դասագիրք»։ Մենք կարծում ենք, որ աւելի լաւ է գործել ընդհակառակն, բայց մի և նոյն ժամանակ կարելի է լրացնել կամ փոփոխել, եթէ ուսուցիչները կարևոր կը համարեն։

(Կը շարունակվի)

ճեանի յօդուածները «Մասիսի» մէջ, որոնց ուղղութիւնը շատ մօտ է «Մշակի» յայտնած ուղղութեան։ Զը նայելով սակայն այս զօրեղ պրոպոգանդային, ճառեր ու շրջաբերականներ շարունակում են հրատարակվել Հայաստանի մանուկների «սիրտը և միտքը» կրթելու վերաբերմամբ. երբ ամբողջ ժողովրդի համակրութիւնը լիովին նուիրված է գործնական ուղղութեան, ինչ պէտք և կարիք կայ արդեօք յամառվել և «սրտի ու մտքի» կրթութեան վրա ճառեր գրել. չենք հասկանում թէ այս մարդիկ ինչ են ուզում անել....

Քանի օր է որ Մանկունին այստեղ զուտչտական յօդուածների առարկայ է դառել. Էջմիածնից հեռագրում է այստեղի լրագիրներին հետեւեալը. «Վեհափառ Կաթուղիկոսի հիւանդութեան լուրը սուտ է և չափազանցրած»։ Սոքա էլ ամեն կողմից հարցնում են՝ եթէ «սուտ է», «չափազանցրած» ո՞րն է. եթէ չափազանցրած է, ուրեմն սուտ չէ։ Այս ամենը շատ լաւ, թէկուզ հէնց սուտ լինի, բայց Ը՞րբ պիտի տան սովելոց յանձնաժողովի հաշիւը ութ հազար ռուբլու գումարի համար. չը լինի թէ Մանկունին ուխտել է այդ գումարով 300 եզ մատաղ բերել իր կաթուղիկոսութեան հանելու ժամանակ, կամ թէ չը լինի թէ Պետերբուրգի «աղգասէրները արդէն խոհեմ» անօրինութիւն են արել այդ փողով Հայաստանի աշխարհագրական տախտակը չինել տալ, ասելով. «էլ խոմ ոսվը անցաւ, էլ ինչ հաշիւ է հարկաւոր զանազան յանձնաժողովներին»։ Այս ինչ անգլուխ ազգ ենք եղել մենք, Տէր Աստուած։ Սովելոց յանձնաժողովը կրկին դիմում է «Մշակին» այս մասին։

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 37 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 222 ր. 75 կ., երկրորդ 222 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 75 կ., երկրորդ 91 ր., 62 կ., երրորդ 91 ր. 75 կ., ոսկի 7 ր. 82 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,15 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 215 մարկ 25 պֆ., Փարիզի վրա արժէ 265 ֆրանկ 50 սանտիմ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ